ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Էջմիածին **փետրվարի 2025թ.**

«Երջանկության ճանապարհ» մտավոր զարգացման խանգարումներ ունեցող 18-65 տարեկան անձանց ցերեկային զբաղվածության կենտրոն բարեգործական ՀԿ-ի և Վաղարշապատի համայնքապետարանի միջև:

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Երջանկության ճանապարհ» մտավոր զարգացման խանգարումներ ունեցող 18-65 տարեկան անձանց ցերեկային զբաղվածության կենտրոն բարեգործական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ) և Վաղարշապատի համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնքապետարան) միջև՝ փոխադարձ համագործակցության և աջակցության նպատակով:

Հոդված 2. Հուշագրի նպատակը

Հուշագրի նպատակն է՝

1. Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող անձանց (ՄԶԽԱ) համար առավել ներառական, մատչելի և բարենպաստ պայմանների ստեղծում Վաղարշապատ համայնքում:

2. Մշակութային, կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության ապահովում ՄԶԽԱ-ների համար:

3. Հասարակության մեջ ներառականության խթանում և ՄԶԽԱ-ների իրավունքների պաշտպանություն:

4. Համատեղ ծրագրերի ու միջոցառումների իրականացում:

Հոդված 3. Կողմերի պարտավորությունները

3.1. Համայնքապետարանը պարտավորվում է՝

- Աջակցել ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրերին՝ տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվական աջակցություն:
- Նպաստել համայնքի ենթակառուցվածքների բարելավմանը, որպեսզի դրանք համապատասխանեն ՄԶԽԱ-ների կարիքներին:
- Աջակցել ՀԿ-ին իր գործունեության շրջանակներում:
- Ապահովել համայնքային կազմակերպությունների և այլ կառույցների հետ համագործակցությունը՝ սոցիալական ներառման ծրագրերի արդյունավետ իրագործման համար:

3.2. «Երջանկության ճանապարհ» ՀԿ-ն պարտավորվում է՝

- Իրականացնել կրթական, մշակութային, առողջապահական և սոցիալական ծրագրեր՝ ուղղված ՄԶԽԱ-ների կյանքի որակի բարելավմանը:
- Կազմակերպել իրազեկման արշավներ, սեմինարներ և հանրային միջոցառումներ՝ ՄԶԽԱ-ների իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով:
- Համայնքապետարանի հետ համագործակցելով՝ առաջարկել քաղաքականությունների և ծրագրերի բարելավման մեխանիզմներ:
- Զարգացնել կամավորական ցանց՝ ներգրավելով համայնքի անդամներին ՄԶԽԱ-ների աջակցման գործում:

Հոդված 4. Համագործակցության ձևաչափը

1. Կողմերը պարբերաբար հանդիպելու և քննարկելու են իրենց համատեղ գործունեության ընթացքը:

2. Անհրաժեշտության դեպքում կողմերը կստորագրեն հավելյալ պայմանավորվածություններ՝ հուշագրի շրջանակներում:

3. Համագործակցության արդյունքները կգնահատվեն տարեկան հաշվետվությունների միջոցով:

Հոդված 5. Վեճերի լուծում

Կողմերի միջև առաջացող վեճերը կլուծվեն բանակցությունների միջոցով, իսկ անհաղթահարելի խնդիրների դեպքում՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

Հոդված 6. Վերջնական դրույթներ

1. Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

2. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնելու հուշագրի գործողությունը՝ մյուս կողմին նախապես գրավոր տեղեկացնելու առնվազն 30 օր առաջ:

Սույն հուշագիրը կազմվել է երկու օրինակով՝ հայերեն լեզվով, և կողմերի կողմից ստորագրվելուց հետո նրանք ունեն հավասար իրավաբանական ուժ:

Վաղարշապատ համայնքի ղեկավար	«Երջանկության ճանապարհ» ՀԿ նախագահ
Դիանա Գասպարյան	Գուրգեն Զուրնաչյան
ստորագրություն	ստորագրություն